Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԻԿԻՆ ՍԱՆԴՐԱ ԵՂԻՍԱԲԵԹ ՌՈՒԼՈՎՍԻՆ

Դեկտեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Վրաստանի առաջին տիկին Սանդրա Եղիսաբեթ Ռուլովսին:

Ողջունելով վրաց առաջին տիկնոջ այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ հայ-վրացական դարավոր հարաբերություններին, երկու հարևան ժողովուրդների բարեկամությանը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ տիկին Սանդրա Եղիսաբեթ Ռուլովսը Հայոց Հայրապետին ներկայացրեց իր այցի մանրամասները և այն բարեգործական ծրագրերը, որոնք նա իրականացնում է Վրաստանի Հանրապետությունում: Նա հատկապես կարևորեց այն ծրագրերը, որոնք ուղղված են ժողովրդի սոցիալական կյանքի բարելավմանը, առողջության պահպանությանը և կարիքավորներին օգնելուն:

Վերջում Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց Վրաստանի առաջին տիկին Սանդրա Եղիսաբեթ Ռուլովսին իր առաքելության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ